ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

<<25>>,<<02>>,<<2019թ.>> Spandaryani-dproc@mail.ru

ՀՀ Շիրակի մարզ գ. Սպանդարյան

Հեռ. 093 -33 -99- 19

ՀՀ Շիրակի մարզպետ պարոն Տ.Պետրոսյանին

Հարգելի մարզպետ
Ներկայացնում ենք ՀՀ Շիրակի մարզի <<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ուսուցչի թափուր տեղի մրցույթի տեքստը:

Տնօրեն՝ *Մ.Վարազյան*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 2968-19
25. 02. 19թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի<<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ –ի տեխնոլոգիա (4դասաժամ), երաժշտություն (2դասաժամ) , կերպարվեստ (2դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է(Ձև1),

2.Փաստաթուղթ(դիպլոմ) ՝<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն(Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝3×4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019թ. մարտի 20-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ն, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. մարտի 22-ին ժամը 12:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ ում:

Հասցեն՝ գ.Սպանդարյան փողոց 15,շենք 33

Տեղեկությունների համար զանգահարել՝(093-33-99-19) հեռախոսահամարով: